

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության 1998 թվականի մայիսի 5-ի ՀՕ-217 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 10.1 հոդվածի 3-րդ մասի՝

1. 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«մշակում և վարչապետին է ներկայացնում քաղաքաշինության բնագավառի զարգացումն ապահովող և գործունեությունը կարգավորող օրենքների և իրավական այլ ակտերի նախագծեր, օրենքով վերապահված իրավասության շրջանակում սահմանված կարգով ընդունում է նորմատիվ, անհատական և ներքին իրավական ակտեր.»,

2. 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«օրենքով սահմանված կարգով կազմակերպում և համակարգում է բնագավառի հանրապետական նորմատիվ փաստաթղթերի (բացի ազգային ստանդարտներից) մշակման աշխատանքները, միջպետական նորմատիվ փաստաթղթերի ընդունման և Հայաստանի Հանրապետության տարածքում դրանց գործարկման գործընթացի վարումը.»,

3. 10-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«մշակում է քաղաքաշինական և լանդշաֆտային համակարգերի ներդաշնակեցման ծրագրեր, տարածական պլանավորման նորմեր ու կանոններ, տարբեր գործառական գոտիների քաղաքաշինական և լանդշաֆտային չափորոշիչներ.»,

4. 26-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«հաստատում է շենքերի և շինությունների բազմակի օգտագործման օրինակելի ու փորձարարական նախագծեր, մեթոդական ցուցումներ, կանոններ, ուղեցույցեր, ձեռնարկներ, ձևաթղթեր, հարցաթերթեր և դրանք առաջադրում կիրարկման:»:

Հոդված 2. Օրենքի 14.3 հոդվածի 32-րդ մասում «2021 թվականի հունվարի 1-ից» բառերը փոխարինել «2024 թվականի հունիսի 30-ից» բառերով:

Հողված 3. Օրենքի 16-րդ հոդվածի՝

1. 1-ին պարբերության մեջ «նորմեր, կանոններ, ցուցանիշներ, ինչպես նաև նախագծման, իրականացման ու շահագործման ընթացքում որակի ապահովման պայմաններ» բառերը փոխարինել «նորմեր, կանոններ, ցուցանիշներ, նախագծային փաստաթղթերի կազմին ու բովանդակությանը ներկայացվող պահանջներ, ինչպես նաև նախագծման, շինարարության և շահագործման ընթացքում որակի ապահովման պայմաններ» բառերով,

2. 2-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

Քաղաքաշինական նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերը կազմում են քաղաքաշինական բնագավառի իրավական ակտերի համակարգի բաղկացուցիչ մասը, հաստատվում են քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման մարմնի ղեկավարի կողմից և հիմք են ծառայում փորձաքննության, քաղաքաշինական գործունեության վերահսկողության, վիճելի հարցերի լուծման համար:

Հողված 4. Ուժը կորցրած ճանաչել Օրենքի 30-րդ հոդվածի 4-րդ մասը:

Հողված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

**««ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ**

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

Նախորդ տարիներին նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերը հաստատվել են ՀՀ քաղաքաշինության նախարարի, այնուհետ՝ ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի հրամաններով:

ՀՀ սահմանադրության (06.12.2015թ. փոփոխություններով) 6-րդ հոդվածն ուժի մեջ մտնելուց հետո՝ նույն հոդվածի դրույթների համաձայն, պետական մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց

համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով: Նույն կետով նախատեսված է, որ սահմանադրության և օրենքների հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նպատակով Սահմանադրությամբ նախատեսված մարմինները կարող են օրենքով լիազորվել ընդունելու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր: Լիազորող նորմերը պետք է համապատասխանեն իրավական որոշակիության սկզբունքին:

Հետևաբար, անհրաժեշտություն է առաջանում հստակեցնել քաղաքաշինության բնագավառում իրավական ակտերի, քաղաքաշինական փաստաթղթերի, նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի հաստատման մասով քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման մարմնի՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի իրավասությունները և դրանք ամրագրել «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքում:

Բացի այդ, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքով սահմանված է, որ 2021 թվականի հունվարի 1-ից չի թույլատրվելու առանց սահմանված կարգով հաստատված համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի, կառուցապատման նպատակներով հողամասերի և (կամ) ճարտարապետահատակագծային առաջադրանքների տրամադրումը:

Նպատակն ունենալով մինչև 2021 թվականը բոլոր համայնքներն ապահովել գլխավոր հատակագծերով, սկսած 2017 թվականից իրականացվում է «Քաղաքաշինական ծրագրային (տարածական պլանավորման) փաստաթղթերի մշակում» ծրագիրը:

Ծրագրի շրջանակներում 2017 թվականին մշակվել են ՀՀ Տավուշի մարզի 55 բնակավայրերի տարածքները ներառող միկրոռեգիոնալ փաստաթղթերը, իսկ 2018 թվականի ծրագրով նախատեսված ՀՀ Սյունիքի և Արարատի մարզերի միկրոռեգիոնալ փաստաթղթերի մշակման աշխատանքներն ընթացքում են:

Սակայն, հաշվի առնելով ֆինանսավորման ծավալները, ինչպես նաև առկա մասնագիտական ներուժը (այդ թվում՝ նախագծային կազմակերպությունների), ծրագիրն ավարտելու իրատեսական ժամկետը 2024 թվականն է:

Այս պատճառով, անհրաժեշտություն է առաջանում վերանայել առանց սահմանված կարգով հաստատված համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի, կառուցապատման նպատակներով հողամասերի և (կամ) ճարտարապետահատակագծային առաջադրանքների տրամադրման վերջնաժամկետը:

2. Առաջարկվող կարգավորման բնույթը

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքում, մասնավորապես՝ օրենքի 10.1, 14.3, 16 և 30-րդ հոդվածներում կատարել համապատասխան փոփոխություններ, նպատակ ունենալով օրենքի 14.3 հոդվածի 32-րդ մասով նախատեսված ժամկետը երկարաձգել մինչև 2024 թվականի հունիսի 30-ը, ինչպես նաև քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման մարմնին վերապահել քաղաքաշինության բնագավառում համապատասխան իրավական ակտերի, քաղաքաշինական և նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի հաստատման լիազորություն:

3. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք

Նախագիծը մշակվել է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից՝ ՀՀ կառավարության 2018 թվականի սեպտեմբերի 6-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության

2018-2022 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N1030-Լ որոշման 305.1 կետի հանձնարարականի համաձայն:

4. Ակնկալվող արդյունքը

Առանց գլխավոր հատակագծերի հողհատկացման գործառույթների իրականացման ժամկետի վերանայում, ինչպես նաև քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման մարմինն քաղաքաշինության բնագավառում համապատասխան իրավական ակտերի, քաղաքաշինական և նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի հաստատման լիազորության վերապահում:

ՏԵՂԵԿԱՆՔ

**««ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ
ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԵԼԻՔ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԿԱՄ ԴՐԱՆՑ
ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

««Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխությունների և/կամ լրացումների անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

**««ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ
ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՏՈՒՄ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ
ԲՅՈՒՋԵՆՆԵՐՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԱՎԵԼԱՑՈՒՄՆԵՐԻ ԿԱՄ
ՆՎԱԶԵՑՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

««Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման կապակցությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում եկամուտների և ծախսերի ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում: